Հաստատում եմ
ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային
կենտրոնի տնօրեն
Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Հաշվետվություն

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ

2017թ.

1. ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից ստացել է հավատարմագրում՝ 4 տարի ժամկետով (Հավատարմագրման վկայականի համարը, սերիան ՝ № 18, ԻՀ №021)

2017թ. ընթացքում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժնի կողմից իրականացվել են հետևյալ գործառույթները

2.1 Աշխատանքային խմբի կողմից մշակվել է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ բարելավման պլանը, որը հաստատվել է ԳԿՄԿ Գիտական խորհրդի կողմից:

Բարելավման պլանի համաձայն հաշվետու ժամանակաշրջանում ԳԿՄԿ որակի ապահովման բաժինը հստակցեցրել է

2. 2 ՈԱ համակարգի կառուցվածքը: Մասնավորապես յուրաքանչյուր ամբիոնիում ներդրվել է որակի ապահովման պատասխանատուների համակարգ, որոնց միջոցով առավել

հեշտացել է ոմբիանի ներքին շահակիցների հետ աշխատանքի իրականացումը և տեղեկատվության տարածումը:

2.3 Հաստատված կառուցվածքի համապատասխան՝ առաջադրվել են պատասխանատուներ, որոնց հետ տարվել է նախնական վերապատրաստողական աշխատանք:

2.4 Մշակվել են գործող ՈԱ բաժնի հետ ամբիոնային և մյուս պատասխանատուների համագործակցության մեխանիզմները

2.5 Կազմակերպվել է 32-ժամյա վերապատրաստում՝ ՈԱ պատասխանատուների համար:

3. ՏՏ բաժնի հետ քննարկման արդյունքում ԳԿՄԿ կայքում որակի ապահովման բաժնին տրվել է առանձին էջ՝ փաստաթղթեր ներմուծելու հնարավորությամբ, որտեղ տեղադրվում են ԳԿՄԿ որակի ապահովմանը վերաբորդ բոլոր փաստաթղթերը, ինչի շնորհիվ ՈԱ համակարգի փաստաթղթերը կարող են ունենալ առավել լայն հասանելիություն:

4. Իրավախորհրդատուի հետ քննարկվել և մշակել են կառավարման էթիկայի նորմերը

5. Կազմակերպվել են քննարկումներ՝ ԳԱՑ-երի մշակման վերաբերյալ

6. Շարունակվել է նախորդ տարիների փորձը՝ ***Շրջանավարտների կողմից ԳԿՄԿ իրականացվող կրթական ծրագրերի գնահատումը,*** մասնավորապես՝

6.1 2017 թ. հունվար-փետրվար ամիսներին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժնի գուրծունեության շրջանակներում իրականացվել *է* ***հեռակա ուսուցման*** 2014-2016 թթ. շրջանավարտների կողմից ԳԿՄԿ կրթական ծրագրերի գնահատման հարցում և կատարվել է արդյունքների վերլուծություն: Հարցմանը մասնակցել են հեռակա ուսուցման 176 շրջանավարտ: Կրթական ծրագրի իրականացման որակի կարևոր բովանդակային տարրերն են՝ ***ուսուցման մեթոդները, պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական պատրաստվածության աստիճանը, գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման մեթոդները և օբյեկտիվությունը, պրակտիկան, ուսումնալաբորատոր բազան, լսարանային և լաբորատոր հագեցվածություն*** և այլն: Ահա հենց այս չափորոշիչներով էլ ԳԿՄԿ շրջանավարտները, դիպլոմ ստանալիս, գնահատում եմ ԳԿՄԿ կրթական ծրագրերը՝ հարցաշարի միջոցով: Ապա կատարվել է հիմնական հարցերի քանակական և որակական վերլուծություններ: Վերլուծությունը ներկայացվել է ինչպես ԳԿՄԿ

տնօրինությանը, այնպես էլ ԳԿՄԿ ամբիոնների վարիչներին և ամբիոնային պատասխանատուներին, հանձնարարվել է կազմակերպել քննարկումներ՝ ամբիոնների նիստերի շրջանակներում դիտարկել առաջարկները և հնարավորության սահմաններում տալ լուծումներ:

6.2 2017թ. մայիսին իրականացվել է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ***առկա ուսուցման*** 2015-2017 թթ. շրջանավարտների կողմից կրթական ծրագրերի գնահատում և շրջանավարտների կողմից ԳԿՄԿ կրթական ծրագրերի գնահատման արդյունքների վերլուծություն: Սույն հարցումների նպատակն է վերանայել և բարելավել ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ դասավանդման և ուսումնառության որակը, կրթական ծրագրերի վերանայման գործընթացում հաշվի առնել շրջանավարտների կարծիքները: Հետազոտության ընթացքում կիրառվել է անկետավորման մեթոդը, որը թույլ է տվել ստանալ քանակական և որակական տեղեկատվություն: Հարցման գլխավոր համակազմում ընդգրկվել են ԳԿՄԿ 2015-2017թթ. առկա ուսուցման շրջանավարտները՝ յոթ բաժիններից: Հարցմանը մասնակցել են առկա ուսուցման 89 շրջանավարտ: Վերլուծությունը ներկայացվել է ԳԿՄԿ ամբիոնների վարիչներին և ամբիոնային պատասխանատուներին, հանձնարարվել է կազմակերպել քննարկումներ՝ ամբիոնների նիստերի շրջանակներում դիտարկել առաջարկները և հնարավորության սահմաններում տալ լուծումներ, ինչպես նաև կազմակերպել հանդիպումներ ուսանողության հետ, եթե բարձրացված հարցերի վերաբերյալ անհրաժեշտ է առավել մանրամասն կարծիք:

6.3 Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են նաև ԳԿՄԿ մագիստրանտների՝ կիսամյակային դասընթացներից գոհունակության հարցումներ, մասնավորապես՝

ա/ Հեռակա ուսուցում.

2016-18 թթ. / 2016-17 ուստարի, 1-ին կուրսի 2-րդ կիսամյակ/, ժամկետը՝սեպտեմբեր-հոկտեմբեր / - 9 խումբ

2015-17 թթ. /2-րդ կուրսի 2-րդ կիսամյակ/- 9 խումբ

բ/ Առկա ուսուցում.

2016-18թթ. / 2016-17 ուստարի, 1-ին կուրսի 1-ին կիսամյակ/ ժամկետը՝ փետրվար-մարտ/ - 8 խումբ

2016-18թթ. /2016-17 ուստարի, 1-ին կուրսի 2-րդ կիսամյակ/ ժամկետը՝ սեպտեմբեր-կոկտեմբեր/- 8 խումբ

2015-2017 թթ. /2016-17-ուստարի, 2-րդ կուրսի 1-ին կիսամյակ/ ժամկետը՝ փետրվար-մարտ/ - 8 խումբ

Հարցումների արդյունքները վերլուծվել են Որակի ապահովման բաժնի կողմից, ներկայացվել տնօրինության նիստին և ուղարկվել համապատասխան մասնագիտական ամբիոնները՝ պարտադիր քննարկման:

Ընթացիկ տարում կատարվել են նաև որոշակի բարելավումներ հարցումների գործող կարգերում: Կրթական ծրագրերից շրջանավարտների գոհունակության ամենամյա և կրթական ծրագրերից ուսանողների կիսամյակային հարցման ընթացակարգում որոշակի կետերի ավելացումը կամ հարցաթերթիկում փոփոխությունները հիմնավորվում են գործիքի չաշխատելու կամ ինֆորմացիայի ոչ ամբողջական կամ սուբյեկտիվության բարձր ցուցանիշ ունենալու հանգամանքներով:

7. **Ամբիոնի փաստաթղթերի կազմում ՊԻԳԲ սկզբունքով**

ԳԿՄԿ Կրթության ՈԱ բաժնի կողմից ամբիոնների վարիչների և որակի ապահովման պատասխանատուների հետ, ներկայացվել է ՊԻԳԲ սկզբունքը՝ իր առավելություններով և թերություններով: ԳԿՄԿ ամբիոններին է ուղարկվել համապատասխան բաշխիչ նյութերը՝ ծանոթանալու և ՊԻԳԲ սկզբունքը՝ ամբիոնային աշխատանքներում, մասնավորապես տարեկան և երկարաժամկետ ռազմավարությունների մշակման գործընթացում ներդնելու համար:

8. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ որակի ապահովման բաժնի կողմից պիլոտային տարբերակով կազմակերպվել է նաև ***ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հեռակա ուսուցման 2015-2017 թթ. շրջանավարտների կողմից պրակտիկաների գնահատումը:***

Հետազոտության ընթացքում կիրառվել է անկետավորման մեթոդը, որը թույլ է տվել ստանալ քանակական և որակական տեղեկատվություն: Հարցման գլխավոր համակազմում

ընդգրկվել են ԳԿՄԿ 2015-2017 թթ. հեռակա ուսուցման շրջանավարտները: Հարցմանը մասնակցել են առկա ուսուցման 22 շրջանավարտ՝ համապատասխանաբար երկու բաժիններից՝ ***Գրադարանային տեղեկատվական աղբյուրներ՝ 8 և Սոցիալական հոգեբանություն՝ 14:***

Վերլուծության արդյունքները ներկայացվել և քննարկվել են համապատասխան ամբիոններում:

9. 2017թ. նոյեմբերին, տնօրինության համաձայնությամբ՝ ԳԿՄԿ մասնագիտական ամբիոններում դասավանդող դասախոսների դասահաճախումները վերահսկելու նպատակով ՈԱ բաժինը իրականացրել է մոնիթորինգ /մշտադիտարկում/: Արդյունքները ներկայացվել են ինչպես տնօրինությանը, այնպես էլ՝ համապատասխան ամբիոնների վարիչներին:
10. 2017 թվականի ապրիլի 26-28-ը <<Yerevan EXPO>> ցուցասրահում անցկացվեց հերթական՝ 16-րդ միջազգային մասնագիտացված «Կրթություն և կարիերա էքսպո-2017» ցուցահանդեսը, որտեղ Գիտակրթական միջազգային կենտրոնը ներկայացրեց մասնագիտական ամբիոնների աշխատանքներն ամփոփող ցուցանմուշներ (բուկլետներ, պաստառներ, տեղեկատվական նյութեր, գրքեր, ամսագրեր, պարբերականներ և այլն): Նաև՝ «Գործարար վարչարարություն» հեռավար համատեղ մագիստրոսական կրթական ծրագիրը:
11. Հաշվետու տարում բաժինը պատրաստել և SS բաժնին տրամադրել է շուրջ 17 տեղեկատվական նյութ և 7 փաստաթուղթ՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ վեբկայքում տեղադրելու համար:

ԳԿՄԿ որակի ապահովման բաժնի պետ՝
Ն. Վարդանյան